

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
Private & Investment Banking



ARM SWISS BANK
Private & Investment Banking





Հովանդասկություն

TABLE OF CONTENTS

- 4** *Բանկի Գործադիր տնօրենի ուղերձը*
Message of the Executive Director
- 12** *Բանկի գործունեության հիմնական ուղղությունները*
Main activities of the Bank
- 14** *Վարկավորում*
Lending
- 20** *Ֆակտորինգ և առևտրի ֆինանսավորման գործիքներ*
Factoring and other instruments of trade finance
- 23** *Ներդրումային բանկային ծառայություններ*
Investment banking services
- 29** *Մարքեթինգ*
Marketing
- 34** *Տեղեկատվական տեխնոլոգիաներ*
Information technologies

| | |
|---|-----------|
| Ռիսկերի կառավարում <i>Risk management</i> | 36 |
| Ներքին աուդիտ <i>Internal audit</i> | 40 |
| Անձնակազմի կառավարում <i>Human resource management</i> | 41 |
| Ֆինանսական արդյունքներ <i>Financial results</i> | 46 |
| Անկախ աուդիտորի եզրակացություն և Ֆինանսական հաշվետվություններ <i>Independent auditor's report</i> | 52 |
| Օգտակար տեղեկատվություն Բանկի մասին <i>Other useful information about the bank</i> | 66 |
| Բանկի արտասահմանյան թղթակից բանկերի ցանկը <i>Foreign Correspondent Banks</i> | 68 |

Տարեկան հաշվետվության դիզայնում օգտագործված երաժշտական ժանրերի
վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները՝ | The sources of information
about musical genres used in annual report design:

www.wikipedia.org, www.stradivari.ru, www.muzey-factov.ru, www.is.webplan.ru,
www.newyork.com, www.financesonline.com, www.armenianduduk.am



Դասնկի գործադիր սևորտնի ուղերձը

MESSAGE OF THE BANK'S EXECUTIVE DIRECTOR



Հարգելի տիկնայք և պարոնայք

2014 թվականն ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի համար նշանավորվեց արդյունավետության ուշագրավ ցուցանիշներով, ինչն օգնեց պահպանել աճի կայուն տեմպերը և ամրապնդել Բանկի մրցակցային դիրքերը ՀՀ բանկային համակարգում:

Բանկը, հավատարիմ մնալով իր ռազմավարական նպատակներին, շարունակեց աշխատել կորպորատիվ ու ներդրումային ուղղություններով՝ ընդլայնելով հաճախորդների քանակը և բարելավելով գործող ծառայություններն ու բիզնես-գործընթացները:

2014թ.-ը Բանկը կրկին ամփոփեց գործունեության հիմնական ցուցանիշների աճով և ապահովեց ավելի քան 2.1 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթ՝ շուրջ 22.2%-ով գերազանցելով 2013թ.-ի արդյունքներով ձևավորված զուտ շահույթի ցուցանիշը:

Բանկն իր գործունեության ընթացքում միշտ ապահովել է շահույթի կայուն աճ և կարևորել է ֆինանսական ցուցանիշների որակական մասը՝ համակարգում զբաղեցնելով առաջատար դիրքեր: Մասնավորապես՝ վերջին տարիների ընթացքում ROA-ի ցուցանիշով Բանկն ընդգրկվել է համակարգի առաջին հնգյակում, իսկ ROE-ի ցուցանիշով՝ առաջին տասնյակում:

Բանկը, չնայած բանկային համակարգում առկա մրցակցությանը, սերտորեն համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ, կարողացավ պահպանել իր կողմից առաջարկվող պրոդուկտների մրցակցային պայմանները և ներգրավել նոր հաճախորդներ:

2014թ.-ին Բանկը շարունակեց սերտ համագործակցությունն իր ռազմավարական գործընկերոջ՝ «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի (ՎՋԵԲ-ի) հետ:

ՎՋԵԲ-ի հետ համագործակցության զարգացման շրջանակներում 2014թ.-ին Բանկի և ՎՋԵԲ-ի միջև ՓՄՁ վարկավորման ծրագրի շրջանակներում լրացուցիչ վարկային

Dear Ladies and Gentlemen,

2014 was marked another successful year of performance for ARMSWISSBANK which helped to maintain sustainable growth rates and strengthen its competitive position in RA banking system.

Remaining loyal to its strategic goals ARMSWISSBANK continued to conduct activities in corporate and investment banking services increasing the customer base and improving current service and business processes.

In 2014 the Bank again recorded increase in its year-end key performance indicators and provided more than AMD 2.1 billion of net profit over-performing the previous year indicator by about 22.2%.

It is worth to mention that during operating years the Bank always ensured stable growth of profit and improvement of financial indicators holding leading positions. In banking system, particularly for the last years, the Bank has been included into the list of top 5 Armenian banks by ROA indicator and into the list of top 10 Armenian banks by ROE indicator.

Despite the increased competition in the banking sector, the Bank by the means of active cooperation with international organizations managed to maintain the competitive terms of suggested products as well as to attract new customers.

In 2014 the Bank continued cooperation with European Bank for Reconstruction and Development (EBRD) as its main strategic partner. Within the scope of the cooperation, in 2014 under the SME lending program, a new agreement for obtaining additional loan resources of USD 5 million equivalent Armenian drams was

ռեսուրսների ներգրավման նպատակով ստորագրվեց ևս մեկ պայմանագիր՝ 5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումարի չափով:

Բանկի ու ՎՋԵԲ-ի միջև ՓՄՁ վարկավորման և Առևտրի ֆինանսավորման ծրագրերի շրջանակներում երկարատև սերտ համագործակցության արդյունքում 2014թ.-ի հուլիսին ՎՋԵԲ-ի կողմից «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին շնորհվեց «Հաստատող բանկ»-ի կարգավիճակ, ինչի շնորհիվ Բանկն այսուհետ կարող է հաստատել արտասահմանյան բանկերի կողմից թողարկվող ակրեդիտիվներն ու երաշխիքները:

Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում 2014թ.-ին Բանկը 2 մլն ԱՄՆ դոլարի չափով պայմանագիր կնքեց նաև «Ասիական զարգացման բանկ»-ի հետ:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկը շարունակեց նաև համագործակցությունն FCI միջազգային ֆակտորինգային ընկերության հետ՝ միջազգային ֆակտորինգի, «Գերմանահայկական հիմնադրամ» ԾԿԳ Հիմնարկի հետ՝ ՓՄՁ վարկավորման և Վերականգնվող էներգիայի զարգացման աջակցությանն ուղղված ծրագրերի, իսկ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ-ների հետ՝ հիփոթեքային վարկային ծրագրերի շրջանակներում:

Բանկը այսուհետ ևս նախատեսում է ընդլայնել իր գործընկերների շրջանակը՝ շեշտադրելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը: ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը միշտ պատրաստակամ է եղել Հայաստանում գործունեություն ծավալող միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցություն սկսելու հարցում և հանդես է եկել որպես վստահելի ու կայուն գործընկեր: 2014թ.-ին Բանկը ձեռք է բերել նոր պայմանավորվածություններ և առաջիկայում նախատեսում է իր հաճախորդներին առաջարկել նոր ծառայություններ:

Բանկն էական ձեռքբերումներ է ունեցել նաև ներդրումային գործունեության ոլորտում:

2014թ.-ին Բանկը կրկին շարունակեց իր ակտիվ ներդրումային գործունեությունը՝ պահպանելով պետական պարտատոմսերի շուկայի գործակալի կարգավիճակը և հանդես գալով որպես իր հաճախորդների կողմից թողարկվող արժեթղթերի անդերրայթեր և շուկա ստեղծող (մարքեթ-մեյքեր):

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, հանդիսանալով շուկայի առաջատար, 2014թ.-ին կազմակերպեց «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի 4 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով պարտատոմսերի չորս թողարկում, որոնք կազմում էին շուկայի ընդհանուր տեղաբաշխումների ծավալի շուրջ 63%-ը: Ընդ որում, 2014թ.-ին «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն առաջին անգամ թողարկեց միջին ժամկետայնության (թվով 3 տրանշ) 3 և 5 տարի մարման ժամկետներով արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք ամբողջությամբ տեղաբաշխվեցին շուկայի մասնակիցների միջև: Որպես այս տեղաբաշխումների կազմակերպիչ՝ կրկին հանդես եկավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»

signed between the Bank and EBRD.

As a result of long and close cooperation between ARMSWISSBANK and EBRD within the scope of Trade Finance and SME lending programs, on July 2014 EBRD granted the bank a status of “Confirming Bank”. The new status enables the Bank to confirm the letters of credit and guarantees issued by international banks.

In 2014 ARMSWISSBANK signed an agreement of USD 2 million with Asian Development Bank within the scope of Trade Finance program.

During the reporting year the Bank continued to enhance cooperation with Factors Chain International (FCI) in frames of International factoring, the German Armenian Fund (GAF) within the scope of SME lending and Renewable Energy Development programs and with “National Mortgage” and “Home for Youth” UCO CJSCs within the scope of mortgage programs.

The Bank plans further to increase the number of its partners by cooperating with some other new international organizations. ARMSWISSBANK has always been open for starting cooperation with international organizations operating in Armenia and appeared to be a reliable and stable partner for them. During 2014 the Bank signed new agreements and is going to offer new services for customers.

During the reporting year the Bank had also significant achievements in its investment activity.

In 2014 as a result of its continuous activities in investment market, the Bank held its status of Government Securities market agent and acted as an underwriter and market-maker for the securities issued by its customers.

During the reporting year the Bank as a market leader organized 4 underwritings of AMD 4 billion nominal value securities for “National Mortgage Company” RCO CJSC in “NASDAQ OMX ARMENIA” OJSC. The underwritings constitute 63% market share of the total underwritings in RA. Moreover in 2014 for the first time “National Mortgage Company” RCO CJSC issued coupon bonds (with 3 tranches) with 3-5 years of maturity which were totally allocated among the market participants. “ARMSWISSBANK” acted as an organizer of the allocation.

It is worth mentioning that the Bank also made two-sided quotations of “ARTSAKH HEK” OJSC’s shares in “NASDAQ OMX ARMENIA” stock exchange and acted as a market maker ensuring the liquidity of the mentioned shares.

During the reporting year the Bank devoted special

ՓԲԸ-ն:

Հարկ է նշել, որ 2014թ.-ին Բանկն իրականացրեց նաև «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումներ «ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում և, հանդես գալով որպես բաժնետոմսերի շուկա ստեղծող, ապահովեց դրանց իրացվելիությունը երկրորդային շուկայում:

Բանկն առանձնակի ուշադրություն է դարձնում ֆինանսական շուկայում բանկերի և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների՝ վարկային կազմակերպությունների, ապահովագրական, բրոքերային ընկերությունների համար որպես միջնորդ օղակ ծառայությունների մատուցմանը՝ առաջարկելով նրանց ծառայություններ ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում՝ հնարավորություն ընձեռելով ներդրումներ կատարելու տարբեր ֆինանսական գործիքներում:

Ներդրումային ծառայությունների ոլորտում Բանկը շարունակելու է իրականացնել նոր պրոդուկտների մշակման և զարգացման ուղղությամբ աշխատանքներ:

2014թ.-ին Բանկը ձեռնամուխ եղավ իր ռազմավարական նպատակներից ևս մեկի իրագործմանը. հոկտեմբերին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» և «ՄԵՆԵՋՄԵՆԹ ՄԻՔՍ» ընկերությունների միջև ստորագրվեց *Մասնավոր ներդրումների կառավարման գործունեություն իրականացնող ընկերություն* հիմնադրելու վերաբերյալ Մտադրությունների մասին հուշագիր:

Ընկերության հիմնական առաքելությունն է լինելու ՀՀ-ում և ՀՀ տարածքից դուրս ստեղծվող կամ գործող մասնավոր առևտրային ընկերությունների կապիտալում ներդրումներ կատարելու, այդ ներդրումները կառավարելու և հետագայում դրանց օտարումը կազմակերպելու գործում ներդրողներին համալիր ծառայությունների մատուցումը:

Բանկը, հանդիսանալով Հայ-շվեյցարական գործարարության զարգացման միության հիմնադիր-անդամ, հովանավորեց 2014թ.-ի մայիսին միության և Շվեյցարիայի Առևտրաարդյունաբերական պալատի համատեղ ջանքերով Ցյուրիխում կազմակերպված գործարար ֆորումը՝ շվեյցարացի գործարարներին Հայաստանում բիզնես ծավալելու հնարավորությունները ներկայացնելու նպատակով:

Բանկի գործունեության ընդլայնման և մրցակցային դիրքերի ամրապնդման նպատակով, ինչպես նաև ելնելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի կտրուկ ավելացման պահանջից՝ առաջիկայում Բանկը նախատեսում է ընդհանուր կապիտալի մեծության ավելացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Մենք մտադիր ենք շարունակել աշխատել նույն եռանդով, խանդավառությամբ և վճռականությամբ՝ հավատարիմ մնալով մեր սկզբունքներին ու հետամուտ լինելով առաջիկա տարիների մեր ռազմավարական նպատակների իրագործմանը:

attention to its mediation services for bank and non-bank financial institutions as lending, insurance and brokerage companies. In this regard, the Bank offers different products in both RA and international financial markets providing opportunities to make investments in different kind of financial instruments.

The Bank will continue the activities towards design and improvement of new products.

As a core of its strategic objective in 2014 the “ARMSWISSBANK” CJSC and Management Mix Ltd. Co executed Memorandum upon funding a private investment management company.

The principal mission of the company is providing complex services in making capital investments, managing them and organizing the further alienation, as well as creating and managing investment funds in private commercial companies acting or founding in RA or abroad.

On may 2014, as a founder-member of Armenian Swiss Business Development Association the Bank sponsored the business forum which was held in Zurich and organized by the Association and Swiss Chamber of Commerce (CIS countries) in order to introduce Swiss entrepreneurs with business opportunities in Armenia.

To expand the Bank's activities, strenghten competitive position as well as to comply with RA Central Bank Board requirement about sharply increasing the minimal limit of total capital, ARMSWISSBANK plans in future to take activities to raise total capital of the Bank.

We will strive to work with the same energy, enthusiasm and determination, struggling to be true to our principless and pursuing our strategic objectives for coming years.



Բանկի անձնակազմի անունից իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում մեր ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ, ԳՈՐԾՆԿԵՐՆԵՐԻՆ, ԽՈՐՀՐԴԻՆ և ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻՆ՝ Բանկին ցուցաբերած վստահության ու աջակցության, ինչպես նաև փոխշահավետ համագործակցության համար:

Ցանկանում եմ իմ վստահությունն ու երախտագիտությունը հայտնել նաև ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի անձնակազմին՝ պրոֆեսիոնալ և նվիրված աշխատանքի համար:

On behalf of the Bank's staff I would like to express my gratitude towards our Customers, Partners, Board Members and Shareholders for their trust, support and mutually beneficial cooperation.

I would like also to express my trust and gratitude to the ARMSWISSBANK staff for their demonstrated professionalism and commitment.

Գևորգ Մաչանյան

Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն

Gevorg Machanyan

Chairman of the Management Board
Executive Director





**ԳՐԻԳՈՐ
ՄՈՎՍԻՍՅԱՆ**

GRIGOR
MOVSISYAN

Գործադիր տնօրենի տեղակալ -
Ռիսկերի կառավարման
դեպարտամենտի տնօրեն

Deputy Executive Director -
Director of Risk Management
Department



**ԿԱՐԵՆ
ՏՈՒՐՅԱՆ**

KAREN
TURYAN

Գործադիր տնօրենի տեղակալ -
Ներդրումային դեպարտամենտի
տնօրեն

Deputy Executive Director -
Director of Investment Department



**ԳՐԻԳՈՐ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

GRIGOR
HOVHANNISYAN

Գործադիր տնօրենի տեղակալ -
Վարկավորման
դեպարտամենտի տնօրեն

Deputy Executive Director -
Director of Lending Department



**ԱՆԺԵԼԱ
ԲԱՐՍԵԴՅԱՆ**

ANZHELA
BARSEGHYAN

Բիզնեսի զարգացման
դեպարտամենտի տնօրեն

Director of Business
Development Department



**ԳԵՎՈՐԳ
ԽԱՉԱՏՐՅԱՆ**

GEVORG
KHACHATRYAN

Գործադիր տնօրենի տեղակալ -
Հաճախորդների սպասարկման
դեպարտամենտի տնօրեն,

Deputy Executive Director -
Director of Customer
Service Department



**ՍԵԴՐԱԿ
ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ**

SEDRAK
BAGHDASARYAN

Գլխավոր հաշվադատ -
Հաշվադատական հաշվառման և
հաշվետվությունների
դեպարտամենտի տնօրեն

Chief Accountant -
Director of Accounting and
Reporting Department



Դասական երաժշտություն

CLASSICAL MUSIC

Դասական երաժշտությունը արևմտյան երաժշտության ավանդույթներում ստեղծված և արմատավորված երաժշտության ուղղություն է: Այն ընդգրկում է երկարատև ժամանակաշրջան՝ մոտ 11-րդ դարից մինչ այսօր: Այս ավանդույթի հիմնական կանոնները սահմանվել են 1550 և 1900 թվականների միջև ընկած ժամանակահատվածում:

Classical music is art music produced or rooted in the traditions of Western music. It encompasses a broad span of time from roughly the 11th century to the present day. The central norms of this tradition became codified between 1550 and 1900.



Հասնի գործունեության հիմնական ուղղություններ

MAIN ACTIVITIES OF THE BANK

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, իր հիմնական գործունեությունն իրականացնում է կորպորատիվ և ներդրումային ուղղություններով՝ ներդրելով միջազգային բանկային համակարգում ընդունված փրայվիթ բանկային տեխնոլոգիաները: Միևնույն ժամանակ, կորպորատիվ հաճախորդներին ծառայությունների ամբողջական փաթեթ առաջարկելու նպատակով Բանկը մատուցում է նաև այլ ֆինանսական ծառայություններ:

Բանկը մշտապես աշխատանքներ է իրականացնում հաճախորդների անհատական կարիքների բացահայտման ուղղությամբ՝ վերջիններիս առաջարկելով իրենց կարիքների համապատասխան ֆինանսական լուծումներ:

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն առանձնանում է կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող համալիր ծառայությունների լայն տեսականիով՝ սկսած ավանդական բանկային ծառայություններից (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ձևեր սխեմաներ, առևտրի ֆինանսավորում և այլն) մինչև ոչ ավանդական բանկային ծառայություններ (այլընտրանքային ֆինանսավորում, ֆակտորինգ, ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ֆինանսական խորհրդատվության մատուցում և այլն):

Առևտրի ֆինանսավորումը, ֆակտորինգային ծառայությունները, ինչպես նաև ապրանքային ֆինանսական ֆյուչերսները հիմնականում ուղղված են արտահանման և ներմուծման ոլորտում գործող հաճախորդներին՝ նպատակ ունենալով պահպանել նրանց մրցունակությունը տեղական և միջազգային շուկաներում՝ ընձեռելով նոր շուկաներ ներթափանցելու հնարավորություն:

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային չափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների մատուցումը: Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ներդրումային գործիքների բավականին լայն տեսականի, ինչպես նաև ամերիկյան, եվրոպական, ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր, դեպոզիտար ստացականներ, պետական և կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերսներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո մարժինալ գործառնություններ, կանխիկ ու անկանխիկ ոսկով գործառնություններ և այլն:

Ֆինանսավորման ածանցյալ գործիքների միջոցով Բանկի հաճախորդներն առավել արդյունավետ կարող են

Remaining loyal to its policy, ARMSWISSBANK conducts its activity in the areas of corporate and investment banking as well as introducing private banking principles accepted in international practice. At the same time for the purpose of offering corporate customers full package of services Bank also suggest other financial services.

ARMSWISSBANK stands out by the wide range of services provided to its corporate clients including both traditional (payment and settlement services, lending services, flexible deposit schemes, trade finance, etc.) and non-traditional services (alternative financing, factoring, forward, swap, option, financial consulting, etc.). The Bank has always been making efforts to find out client's needs and offer them customized financial solutions.

Trade finance, factoring as well as commodity and financial futures are mainly designed for clients engaged in importing and exporting activities to support their competitiveness in local and international markets and facilitate new markets penetration.

One of the Bank's main strategic directions is offering investment banking services complying with international standards. The Bank offers its customers a wide range of investment instruments, such as stocks of American, European and Russian companies and investment funds, depository notes, government and corporate bonds, commodity futures as well as repo agreements and marginal operations with foreign securities, transactions with gold including metal accounts, etc.

The Bank's clients can improve risk diversification and manage their cash flows more efficiently through derivatives offered by the Bank.

In order to cope with the market challenges and to develop new investment projects successfully, ARMSWISSBANK offers underwriting services to its corporate clients.

As one of the leaders in the Armenian government securities market and a government securities agent of RA, ARMSWISSBANK acts as a market maker to

իրականացնել իրենց ռիսկերի դիվերսիֆիկացումը, ինչպես նաև դրամական հոսքերի կառավարումը:

Ժամանակակից շուկաների մարտահրավերներին դիմակայելու, ինչպես նաև ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեթղթերի թողարկման ու տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ:

Լինելով առաջատարներից ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում, ինչպես նաև հանդիսանալով ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի Գործակալ, ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ն իրականացնում է շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքեր) գործառույթներ՝ նպաստելով արժեթղթերի հայաստանյան շուկայի իրացվելիության բարձրացմանը: ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը շարունակում է ակտիվ մասնակցությամբ հանդես գալ ՀՀ արժեթղթերի շուկայի ֆինանսական միջնորդության ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխումներին վերաբերող նախաձեռնություններում:

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է անհատականացված (tailor-made) պրոդուկտների փաթեթ՝ արժեթղթերի անհատական, միասնական և այլ տիպի պորտֆելների ձևավորում, բրոքերային ու պահառուական ծառայությունների, ներդրումային գործառնությունների վերաբերյալ խորհրդատվության մատուցում: Ճկունությունը հաճախորդների հետ աշխատելիս կարևոր գործոն է Բանկի առաջանցիկ զարգացման և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» բրենդի առաջնղման գործում:

enhance liquidity of the Armenian securities market. ARMSWISSBANK continues active participations in initiatives regarding legal reforms of financial intermediation in the RA securities market.

ARMSWISSBANK offers its clients tailor-made services, including development of individual, corporate and other types of securities portfolios, brokerage, custodial and consulting services. The flexibility while working with the clients is one of the key factors for the progressive development of the Bank and promotion of “ARMSWISSBANK” brand.



• Մեկ ջութակը պատրաստված է ավելի քան 70 կտոր փայտից:

A single violin is made from over 70 individual pieces of wood.

• Մինչ այժմ ոչ մի սարքավորում չի ստեղծվել, որը կկարողանա նմանակել ջութակի ձայնը:

So far no instrumentation has been able to synthesize the sound of the violin.

Վարկավորում

LENDING

Ընդհանուր վիճակագրություն

Համաձայն Բանկի որդեգրած վարկավորման քաղաքականության՝ Բանկը նախապատվություն է տալիս կայացած կորպորատիվ հաճախորդներին, որոնք ունեն կայուն զարգացող բիզնես, բարի համբավ գործարար աշխարհում ու կառավարման որակյալ համակարգ, ինչպես նաև ակտիվորեն օգտվում են Բանկի կողմից առաջարկվող այլ ծառայություններից և գործիքներից:

Իր հիմնական գործունեության ուղղություններից մեկի՝ վարկային ծառայությունների ուղղությամբ 2014թ.-ի ընթացքում ևս Բանկը շարունակել է հաճախորդներին առաջարկել կորպորատիվ բանկային ծառայությունների լայն փաթեթ, որը ներառում է ինչպես ավանդական, այնպես էլ ոչ ավանդական բանկային ծառայություններ, մասնավորապես՝ վարկեր, վարկային գծեր, գնման պատվերի ֆինանսավորում, արտահանման խթանման ֆինանսավորում, նախագծային ֆինանսավորում, օվերդրաֆտ, ֆակտորինգ, ակրեդիտիվ, երաշխիք և հաճախորդների կարիքներից բխող այլ ծառայություններ:

2014թ.-ի վերջի դրությամբ Բանկի վարկային պորտֆելը կազմել է շուրջ 37.2 մլրդ ՀՀ դրամին համարժեք գումար, որը նախորդ ժամանակահատվածի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է մոտ 34%-ով և գերազանցել է 2014թ.-ի համար նախատեսված պլանային ցուցանիշը 5.2 մլրդ ՀՀ դրամով կամ մոտ 16%-ով: Հարկ է նշել նաև, որ 2014թ.-ի ընթացքում վարկային ներդրումներից ստացված զուտ տոկոսային եկամուտների ցուցանիշը կազմել է 3.9 մլրդ ՀՀ դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը շուրջ 26%-ով:

According to the Bank's lending policy well established corporate clients with steady operating businesses, good reputation and high quality management system are given preference over other customers and they benefit from other provided services and products offered by the Bank as well.

Lending is one of the main operational activities of the bank which provides customers with a wide range of corporate banking services including both traditional and nontraditional banking products particularly loans, credit lines, purchase order financing, pre-export financing, overdrafts, factoring, letters of credit, guarantees, as well as other kind of tailor made services.

In 2014 the loan portfolio amounted to AMD 37.2 billion which overperformed the last year indicator by 34% and by 16% or AMD 5.2 billion in relative to the planned amount for year 2014. Besides it is worth mentioning that the year-end net interest income from loans amounted AMD 3.9 billion which is 26% more than the previous year 's indicator.

• «Դասական երաժշտություն» տերմինն առաջացել է լատիներեն «classicus» տերմինից, որը նշանակում է բարձրագույն դասի հարկատու:
The term classical music originates from the Latin term classicus, meaning taxpayer of the highest class.



Վարկային պորտֆելի և վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտների դինամիկան (մլրդ ՀՀ դրամ)

Dynamics of the loan portfolio and interest income on lending activities (billion AMD)



 Վարկային ներդրումներ
Loan portfolio

 Վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտներ
Interest income on lending activities



Վարկային ռիսկի կառավարում

Վարկային ռիսկի կառավարման նպատակով Բանկը մշտապես աշխատանքներ է իրականացնում և մեծ ուշադրություն է դարձնում վարկային պորտֆելի բաշխվածությանն ըստ տնտեսության ճյուղերի՝ բացառելով առանձին ճյուղի կենտրոնացումը: Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի բաշխվածությունը՝ ըստ տնտեսության ճյուղերի:


Credit risk management

To manage credit risk the Bank always carries out activities and pays particular attention to the diversification of the loan portfolio by the economy sectors excluding centralization within separate sectors.

Below is the loan portfolio distributed by the economy sectors.

2014թ.-ի Վարկային պորտֆելի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի

2014 Distribution of the Loan portfolio by sectors of the economy



Մասնակցություն միջազգային և տեղական վարկային ծրագրերին

Բանկը մշտապես կարևորել է միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ մասնակցելով վարկային և առևտրի ֆինանսավորման տարբեր ծրագրերի: 2015թ.-ին Բանկը նախատեսում է էապես ավելացնել վարկային պորտֆելում ծրագրային վարկերի

Participation in local and international lending programs

The Bank highly prioritizes cooperation with international organizations, participating in credit and trade finance various projects. In 2015 the Bank plans to significantly increase the share of project-based loans in the loan portfolio. Within the scopes

մասնաբաժինը: Բանկը վարկային ծրագրերի շրջանակներում ներկայումս համագործակցում է մի շարք միջազգային ու տեղական վարկատու կազմակերպությունների հետ, մասնավորապես.

- «Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ»-ի (ՎՋԵԲ-ի) հետ, որի հետ գործընկերության հիմքերը դրվել են դեռևս 2010թ.-ին: Նույն թվականին Բանկի և ՎՋԵԲ-ի միջև կնքվել է 5.0 մլն ԱՄՆ դոլար ծավալով վարկային պայմանագիր՝ Փոքր և Միջին Ձեռնարկությունների (ՓՄՁ) վարկավորման և 3.0 մլն ԱՄՆ դոլար ծավալով պայմանագիր՝ Առևտրի ֆինանսավորման ծրագրերի (ԱՖԾ) իրականացման նպատակով:

Համագործակցության ընթացքում Առևտրի ֆինանսավորման ծրագրերի իրականացման նպատակով կնքված պայմանագրի գումարը եռապատկվել է այժմ կազմում է 9 մլն ԱՄՆ դոլար: Ինչ վերաբերում է Փոքր և Միջին Ձեռնարկությունների (ՓՄՁ) վարկավորման ծրագրին, ապա 2014թ.-ին, ի լրումն գործող պայմանագրի, ՎՋԵԲ-ի և Բանկի միջև կնքվեց ևս մեկ պայմանագիր՝ 5 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ ծավալով:

2015թ.-ին Բանկը նախատեսում է խորացնել համագործակցությունը ՎՋԵԲ-ի հետ, մասնավորապես՝ Էներգաարդյունավետությանն ուղղված վարկային ծրագրի շրջանակներում:

- «Գերմանահայկական հիմնադրամ» ԾԿԳ Հիմնարկի (GAF (German-Armenian Fund)) հետ Բանկը համագործակցում է Վերականգնվող էներգիայի զարգացման ֆինանսավորման և ՓՄՁ վարկավորման աջակցության ծրագրերի շրջանակներում: Հարկ է նշել, որ Վերականգնվող էներգիայի զարգացման ֆինանսավորման աջակցության ծրագրում Բանկը ներգրավված է դեռևս 2006թ.-ից:

- «Ասիական զարգացման բանկ»-ի (Asian Development Bank) հետ համագործակցության հիմքը դրվել է 2014թ.-ին՝ Առևտրի ֆինանսավորման ծրագրեր իրականացնելու նպատակով կնքված 2 մլն ԱՄՆ դոլար սահմանաչափի շրջանակներում:

- «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ-ի հետ Բանկը համագործակցում է դեռևս 2011թ.-ից, հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում,

- «Բնակարան երիտասարդներին» ՎԿԿ ՓԲԸ-ի հետ Բանկի համագործակցությունը սկսվել է 2013թ.-ին՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում:

Բանկն ունի միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցության երկարամյա փորձ, ինչը Բանկի նկատմամբ ունեցած վստահության և երկարաժամկետ համագործակցության պատրաստակամության դրսևորման ապացույց է: Օգտագործելով համագործակցության արդյունքում ընձեռված հնարավորությունները՝ Բանկը շարունակում է իր հաճախորդների համար մշակել ու առաջարկել նոր ծառայություններ:

of the project-based loans now the Bank cooperates with number of local and international loan granting institutions, especially with the following ones:

- European Bank for Reconstruction and Development (EBRD), with which the Bank started cooperation since 2010, signing an agreement of Small and Medium Enterprises (SME) financing of USD 5 million and Trade Facilitation Program (TFP) of USD 3 million. During the cooperation, the contract amount of Trade finance projects has tripled and now amounts USD 9 million. Regarding the SME funds limit, in 2015 the Bank signed an additional USD 5 million equivalent to Armenian Dram contract within the existing 5 million funding of Small and Medium Enterprise (SME) lending program.

In 2015 the Bank is going to deepen the cooperation with EBRD, particularly within the frames of Energy efficiency program.

- The Bank cooperates with the German Armenian Fund within the scope of the “Renewable energy development” and SME financing programs. It’s worth mentioning that within the “Renewable energy development” program the Bank started the cooperation in 2006.

- The Bank have started the cooperation with Asian Development Bank (ADB) since 2014 to proceed trade finance programs, within the frames of limit USD 2 million.

- “National Mortgage Company” RCO CJSC, with which the Bank started the cooperation since 2011, within the scope of mortgage loans refinancing program.

- The Bank started the cooperation with “Home for Youth” UCO CJSC in 2013 within the scope of mortgage loan refinancing program.

The Bank has a long experience of cooperation with international financial institutions, which is the evidence of trust and willingness of further long-lasting cooperation. Using the opportunities provided during collaboration, the Bank continues to develop and offer new services to its customers.



and
the
you can
the pro-
I
quested girl is
action.
are on the end of the
waiting someone to do all
Acce-
guide.
persons to
support by
GLORIA DANNEY
New Secretary
Brisbane Jazz Club,
1 Annie St., Kangaroo Pt.

JAZZ



**ENJOY DANCING AND LISTENING TO
THE PACIFIC JAZZMEN**
Every Sunday Night from 8.00 p.m.
Our 15 piece Big Band plays on the last
Thursday every month.

MEMBERS \$2. GUESTS \$3.
PHONE 371 2683

AT
THE ADVENTURERS CLUB
No. 1 ANNIE ST.,
KANGAROO POINT.

THE BRISBANE
jazz
CLUB



Young lady
is. Get her
y.



Գլադ Երաժշտություն

JAZZ MUSIC



Ջազը ստեղծվել է 19-րդ դարի վերջից 20-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում և իրենից ներկայացնում է ամերիկյան և եվրոպական դասական երաժշտություն՝ միահյուսված աֆրիկյան և ստրոնկների ժողովրդական երգերի հետ: Վերջինիս ոճը յուրաքանչյուր երաժշտի անհատական ներկայացման և իմպրովիզացիայի արդյունքում հաճախակի փոփոխվել է տարիների ընթացքում, ինչն էլ հանդիսանում է ժանրի կարևորագույն գրավչություններից մեկը:

Jazz originated in the late 19th to early 20th century as interpretations of American and European classical music entwined with African and slave folk songs. Its style have changed many times throughout the years with each performer's personal interpretation and improvisation, which is also one of the greatest appeals of the genre.



Ծախսորինգ եւ առեւտրի Ֆինանսավորման այլ գործիքներ

FACTORING AND TRADE FINANCE INSTRUMENTS

ՖԱԿՏՈՐԻՆԳ

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի կողմից մատուցվել է ֆակտորինգային ծառայությունների լայն գործիքակազմ, մասնավորապես, ռեգրեսով և առանց ռեգրեսի ներքին ֆակտորինգ, ներքին փակ ֆակտորինգ, երկֆակտոր միջազգային ֆակտորինգ Factors Chain International (FCI) միջազգային ցանցի շրջանակներում և ուղղակի արտահանման ֆակտորինգ:

Բանկը տարվա ընթացքում մշակել է նաև ֆակտորինգային ոչ ստանդարտ սխեմաներ՝ հավատարիմ մնալով յուրաքանչյուր հաճախորդին անհատական մոտեցում ցուցաբերելու իր քաղաքականությանը:

2014թ.-ի ընթացքում Բանկի ֆակտորինգային գործունեության հիմնական ձեռքբերումները եղան պորտֆելի կայունացումը, դիվերսիֆիկացիան և անհրաժեշտ գործողությունների իրականացումը՝ կապված պորտֆելի հետագա շարունակական աճի ապահովման հետ: 2014թ.-ի ընթացքում Բանկն իրականացրել է շուրջ 4.5 մլրդ ՀՀ դրամի գործարքներ՝ նախորդ տարվա 5.1 մլրդ ՀՀ դրամի փոխարեն: Ինչ վերաբերում է ֆակտորինգի պորտֆելի ծավալին, ապա հաշվետու տարվա վերջի դրությամբ այն կազմել է շուրջ 1.2 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 1.0 մլրդ ՀՀ դրամի փոխարեն:

FACTORING


During the reporting year the Bank provided wide range of factoring services particularly Domestic factoring with and without recourse, Domestic close factoring, International factoring with Factors Chain International (FCI)-the network of leading factoring organization and Export factoring.

The Bank has also designed other non traditional factoring products pursuant to its policy of individualized customer approach.

In 2014 the main achievement of factoring service operations was maintaining the stability and diversification of the portfolio, as well as other activities towards portfolio long run growth.

During 2014 the overall factoring operations amounted to about AMD 4.5 billion compared to previous year's AMD 5.1 billion. As at 2014 year end the overall factoring portfolio amounted around AMD 1.2 billion compared to previous year's AMD 1.0 billion.

Ֆակտորինգային գործարքների տարեկան ծավալները (մլրդ ՀՀ դրամ)
Annual turnover of domestic factoring (billion AMD)



Հաշվի առնելով տնտեսության որոշ համակարգաստեղծ հաճախորդների շրջանում ֆինանսական խնդիրների արձանագրման փաստը, ինչպես նաև ֆինանսավորման այլ գործիքների համեմատությամբ ֆակտորինգային գործիքի առավել ռիսկային լինելու հանգամանքը, բանկը ֆակտորինգային գործարքներ տրամադրելիս առաջնորդվում է դեռևս նախորդ տարվանից որդեգրած ռիսկերի զսպման առավել զգուշավոր քաղաքականությամբ՝ սահմանափակելով առավել ռիսկային հաճախորդների և դեբիտորների հետ համագործակցությունը:

2014թ.-ի ընթացքում Բանկին հաջողվեց հիմնականում նոր հաճախորդների և դեբիտորների ներգրավման միջոցով ապահովել պորտֆելի կայունությունը, ինչպես նաև բարելավել պորտֆելի բաշխվածությունը՝ նվազեցնելով մեկ դեբիտորի զծով կենտրոնացումը:

Արդյունքում, տարվա ընթացքում տնտեսության տարբեր ոլորտներից Բանկը ներգրավել է ավելի քան 45 նոր ֆակտորինգային հաճախորդ և դեբիտոր:

Բանկը, պորտֆելի հետագա կայուն աճի ապահովման նպատակով, ակտիվ աշխատանքներ է տանում նոր ֆակտորինգային հաճախորդների ներգրավման, ինչպես նաև գործող հաճախորդների հետ համագործակցության խորացման ուղղությամբ:

ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՅԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Բանկը, կարևորելով միջազգային առևտրի ֆինանսավորման ուղղությունը, 2014թ.-ին ևս, ինչպես և նախորդ տարիներին, ակտիվորեն մատուցել է միջազգային առևտրի ֆինանսավորման ծառայություններ՝ ապահովելով հաճախորդների ներմուծման և արտահանման գործարքների իրականացումը: Բանկն առաջարկում է առևտրի ֆինանսավորման ծառայությունների ամբողջական փաթեթ՝ բավարարելով հաճախորդների պահանջները ապրանքների արտահանման ու ներմուծման գործարքների բոլոր փուլերում:

Առևտրի ֆինանսավորման շրջանակներում 2014թ.-ին Բանկն ակտիվորեն համագործակցել է միջազգային տարբեր ֆինանսական կազմակերպությունների հետ: Այնուամենայնիվ, Առևտրի ֆինանսավորման ծրագրի (ԱՖԾ) շրջանակներում Բանկի առավել ակտիվ գործընկերը 2010թ.-ից ի վեր շարունակում է մնալ ՎՋԵԲ-ը, որի կողմից ԱՖԾ-ի շրջանակներում եռապատկված սահմանաչափը կազմում է 9 մլն ԱՄՆ դոլար: 2014թ.-ի ընթացքում Բանկը ՎՋԵԲ ԱՖԾ-ի շրջանակներում իրականացրել է մոտ 5 մլն ԱՄՆ դոլարի չափով գործարքներ, իսկ տարվա վերջի դրությամբ ԱՖԾ-ի պորտֆելը կազմել է շուրջ 4.5 մլն ԱՄՆ դոլար:

Բանկի և ՎՋԵԲ-ի միջև Առևտրի ֆինանսավորման ծրագրի և ՓՄՁ վարկավորման աջակցության ծրագրի շրջանակներում երկարատև սերտ համագործակցության արդյունքում 2014թ.-ի հուլիսին ՎՋԵԲ-ի կողմից «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»-ին շնորհվել

Considering the fact that factoring products are riskier in comparison to other financial products the Bank applied more cautious policy limiting cooperation with risky customers and debtors. Such kind of policy is explained by the fact that large number of clients has been facing financial issues in the market during the reporting year.

In 2014 the Bank managed to provide portfolio stability by attracting new clients, as well as to improve the diversification of the portfolio decreasing per debtor concentration within overall portfolio.

As a result the Bank attracted 45 new clients from the various sectors of the economy.

To ensure the growth for factoring portfolio the Bank takes active actions to attract new clients as well as to deepen the cooperation with existing buyers and suppliers.

INSTRUMENTS OF TRADE FINANCE

Attaching high importance to international trade financing activities the Bank in 2014 as in previous years, stood out with wide range of trade finance services for customers export and import activities. The Bank provides full portfolio of trade financing services giving customers different kind of financial solutions to satisfy their financial needs in both exporting and importing.

During the reporting year within the scope of Trade Financing programs the Bank actively cooperated with different international financial organizations of which EBRD continued to remain the main strategic partner and its approved limit for trade financing is USD 9 million.

In 2014 within the scope of EBRD's trade financing program the Bank made USD 5 million transactions and at the end of year the Bank's trade financing portfolio was USD 4.5 million.

As a result of long and close cooperation of ARMSWISSBANK and EBRD in Trade Finance and SME lending programs, on July 2014 the Bank was granted a status of "Confirming Bank" by EBRD. The new status enables the Bank to confirm the letters of credit and guarantees issued by international banks.

In 2014 the Bank's employees recorded professional successes with the EBRD and International Chamber of Commerce (ICC) training programs. During the European Bank for Reconstruction and Development

է «Հաստատող բանկ»-ի կարգավիճակ, ինչը թույլ է տալիս Բանկին այսուհետ հաստատել արտասահմանյան բանկերի կողմից թողարկվող ակրեդիտիվներն ու երաշխիքները:

2014թ.-ին ՎԶԵԲ-ի և Առևտրի միջազգային պալատի (ICC) համատեղ ջանքերով կազմակերպված դասընթացների շրջանակներում Բանկի աշխատակիցներն աչքի ընկան իրենց մասնագիտական ունակություններով: Հարկ է նշել նաև, որ այս ամենի արդյունքում, 2014թ.-ի մայիսին Վարշավայում կայացած Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (EBRD-ի) տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ մասնակից բանկերից միայն «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ին շնորհվեց «Առևտրի ֆինանսավորման ծրագրում ակադեմիական գերազանց առաջադիմություն» հավաստագիրը:

Բանկը, ելնելով իր ռազմավարությունից, շարունակում է ընդլայնել իր գործընկերների շրջանակը նաև առևտրի ֆինանսավորման ոլորտում: Արդյունքում, 2014թ.-ի սկզբին՝ առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում, Բանկը 2 մլն ԱՄՆ դոլարի չափով պայմանագիր ստորագրեց նաև «Ասիական զարգացման բանկ»-ի հետ, որի երաշխավորության շրջանակներում Բանկը թողարկեց առաջին ակրեդիտիվը: 2014թ.-ին համագործակցության հիմքեր դրվեցին նաև «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալության» հետ՝ արտահանման ապահովագրության և վերջինիս շրջանակներում արտահանման գործարքների ֆինանսավորման նպատակով:

Annual General Meeting, held in Warsaw on May 2014, among other participating banks only ARMSWISSBANK was rewarded with the certificate of “Trade Facilitation Program in Recognition of Academic Excellence”.

Pursuant to its strategic goal the Bank continues to expand the scope of partners in trade finance. As a result in 2014 ARMSWISSBANK signed an agreement of USD 2 million with Asian Development Bank within the scope of Trade Finance program and under ADB's guarantee the Bank released the First Letter of Credit.

In 2014 the Bank put new cooperation bases with Export Insurance Agency of Armenia (EIA) within the framework of export insurance and financing the export transactions.

• Կոնտրաբասի ստեղծումը հնարավոր է դարձել գրքի հեղինակի սխալմունքի շնորհիվ, ով այնտեղ ոչ ստանդարտ ջութակ էր նկարել, ինչի արդյունքում նրա մոտ նման գործիք ստեղծելու միտք է հղանում:

The creation of contrabass became possible due to the book's author's error, who drew a nonstandard violin and, as a result, came across the idea of making such an instrument.



Ներդրումային բանկային ծառայություններ

INVESTMENTS BANKING SERVICES

Կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխումներ

Դեռևս 2013թ.-ի սկզբից արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում իրականացված փոփոխությունների արդյունքում Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան իր կողմից մատուցվող ռեեստրավարման ու պահառության, ինչպես նաև կարգավորվող շուկայում առևտրին մասնակցելու ծառայությունները սկսեց մատուցել Հաշվի օպերատորների և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամների միջնորդությամբ: Որպես ներդրումային ծառայությունների շուկայի առաջամարտիկ, ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ը շուկայում դարձավ առաջիններից մեկը, որին Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի կողմից շնորհվեց Հաշվի օպերատորի և Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամի կարգավիճակ:

2014թ.-ի ընթացքում Բանկը, որպես Հաշվի օպերատոր, շարունակել է նոր հաճախորդների ներգրավման, ինչպես նաև գործող հաճախորդներին ծառայությունների էլ ավելի ընդգրկում փաթեթ առաջարկելու գործընթացը: 2014թ.-ի ընթացքում Բանկը ռեեստրի վարման պայմանագիր է կնքել թվով 14 թողարկողի հետ (որից 5-ը՝ պարտատոմսերի ռեեստրի վարման վերաբերյալ), իսկ պահառության պայմանագիր՝ թվով 36 հաշվետիրոջ հետ: 31.12.2014թ.-ի դրությամբ պահառության ծառայությունից օգտվում է թվով 121 հաշվետեր, իսկ ռեեստրավարման ծառայությունից օգտվող հաճախորդների քանակը կազմում է 84, որոնցից շատերն իրենց ոլորտում հայտնի ընկերություններ են:

2014թ.-ի ընթացքում կորպորատիվ արժեթղթերի առաջնային շուկայում իրականացվել է թվով 6 թողարկում. մեկ դոլարային՝ 1 մլն ԱՄՆ դոլար թողարկման ընդհանուր ծավալով և հինգ դրամային՝ 6 մլրդ ՀՀ դրամ թողարկման ընդհանուր ծավալով: Ընդհանուր առմամբ, բոլոր 6 թողարկումների ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է շուրջ 6.4 մլրդ ՀՀ դրամ:

Հարկ է նշել, որ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, շարունակելով հանդես գալ որպես շուկայի առաջատար, կազմակերպել է հիշյալ թողարկումների 63%-ը՝ «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ-ի 4 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր անվանական արժեքով պարտատոմսերի 4 թողարկումները: Ընդ որում, 2014թ.-ին «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ-ն առաջին անգամ թողարկեց միջին ժամկետայնության (թվով 3 տրանշ) 3 և 5 տարի մարման ժամկետներով արժեկտրոնային պարտատոմսեր, որոնք ամբողջությամբ տեղաբաշխվել են շուկայի մասնակիցների

Corporate securities underwriting

As a result of changes taken place in Securities Unified Settlement and Accounting System, in 2013 the "Central Depository of Armenia" RCO CJSC started to provide depository, custodian, as well as participation services in regard to trading activities in the regulatory market through Account operators and the members of Regulated market accounting system. As a leader in the investment market ARMSWISSBANK was one of the first financial institutions in Armenia that was granted the status of Account Operator and a member of Regulated market accounting system.

During the reporting year the Bank as Account operator continued both attracting new customers and expanding the range of products portfolio for existing clients.

In 2014 the Bank signed registry maintenance agreements with 14 issuers (5 of which were on bond registry maintenance) and custody service contracts with 36 account holders.

By 31.12.2014 custody service has 121 account holders. The number of customers using registry maintenance service was 84. The majority of them are famous companies in their operating field.

In 2014 there were 6 issues in the RA primary corporate securities market, one of which was in US dollars with the amount of USD 1 million and the remaining 5 were in Armenian drams with the overall amount of AMD 6 billion. The total amount of 6 issues in Armenian dram equivalent amounted around AMD 6.4 billion.

It is worth mentioning that "ARMSWISSBANK" CJSC continued to act as a leader in the market and conducted 63% of the mentioned issues for "National Mortgage Company" RCO CJSC's bonds with nominal value of AMD 4 billion. Moreover in 2014 for the first time "National Mortgage Company" RCO CJSC issued coupon bonds (with 3 tranches) with 3-5 years of maturity which were totally allocated among the market participants. "ARMSWISSBANK" acted as an organizer of the allocation.

միջև: Որպես այս տեղաբաշխումների կազմակերպիչ ևս հանդես է եկել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն:


Տեղաբաշխումներն իրականացվել են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի տեղաբաշխման հարթակում՝ ստանդարտ փակ աճուրդի միջոցով: Բանկն աջակցել է Ընկերությանը «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ՓԲԸ-ում և «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում պարտատոմսերի սեփականատերերի կողմից պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման և սեփականատերերի անձնական հաշիվներին պարտատոմսերի փոխանցման հարցում: Տեղաբաշխված միջին ժամկետայնությամբ պարտատոմսերը թույլատրվել են առևտրին՝ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի կողմից կազմակերպված պարտատոմսերի հիմնական ցուցակում (Abond): Հարկ է նշել նաև այն փաստը, որ Բանկը, «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎԿԿ ՓԲԸ-ի վերը նշված երեք անվանական արժեկտրոնային պարտատոմսերի ցուցակումից հետո, իրականացրել է նաև պարտադիր երկկողմանի գնանշումներ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում՝ հանդես գալով որպես շուկա-ստեղծող:

The underwriting of the bonds was organized in “NASDAQ OMX ARMENIA” CJSC stock exchange through close auction. The Bank assisted the Company to register the property rights in the “Central Depository of Armenia” RCO CJSC and “ARMSWISSBANK” CJSC as well as to transfer bonds to the bondholders’ private accounts. The allocated average term bonds were allowed for trading in “NASDAQ OMX ARMENIA” CJSC bonds primary list (Abond).

It is worth mentioning that afterwards the mentioned bonds were listed, the Bank conducted two-sided quotations of “National Mortgage Company” RCO CJSC shares in “NASDAQ OMX ARMENIA” stock exchange and acted as a market maker.

Կորպորատիվ արժեթղթերի առաջնային տեղաբաշխումների ծավալներն ըստ թողարկողների
The volume of primary placement of securities by corporate issuers

- **Արարատ բանկ (ԱՄՆ դոլար)**
Ararat Bank (USD)
- **ՄՖԿ (Միջազգային ֆինանսական Կորպորացիա)**
International Finance Corporation (IFC)
- **ԱՀԸ (Ազգային Հիփոթեքային Ընկերություն)**
National Mortgage Company
 - **ԱՀԸ 9 (ԱՀԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)**
National Mortgage Company (NMC9)
 - **ԱՀԸ 10 (ԱՀԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)**
National Mortgage Company (NMC10)
 - **ԱՀԸ 11 (ԱՀԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)**
National Mortgage Company (NMC11)
 - **ԱՀԸ 12 (ԱՀԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ)**
National Mortgage Company (NMC12)



Բացի բուն տեղաբաշխման ծառայություններից, Բանկը մատուցում է նաև այլ ծառայություններ, մասնավորապես, իրականացնում է «ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումներ «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում և, հանդես գալով որպես բաժնետոմսերի շուկա ստեղծող, ապահովում է դրանց իրացվելիությունը

Besides underwriting the Bank also provides other services, particularly gives two sided quotes for “ARTSAKH HEK” OJSC’s shares in “NASDAQ OMX ARMENIA” stock exchange and as a market maker ensures their liquidity in the secondary market. In 2014 the Bank carried 22 transactions with the “ARTSAKH

երկրորդային շուկայում: 2014թ.-ին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից «ԱՐՑԱՆ ՅԷԿ» ԲԲԸ-ի բաժնետոմսերով իրականացվել է թվով 22 գործարք՝ շուրջ 74 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

2014թ.-ի ընթացքում, կազմակերպված տեղաբաշխումներից բացի, Բանկը շարունակել է իրականացնել շրջանառության մեջ գտնվող թողարկումների մարումների և հերթական արժեկտրոնների վճարումների սպասարկումը: Մասնավորապես, իրականացվել են «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ի պարտատոմսերի մարումները, որոնց ընթացքում Բանկն աջակցել է թողարկողին ու մատուցել հաշվարկային բանկային ծառայություններ:

2014թ.-ի ընթացքում Բանկը շարունակել է մատուցել նաև խորհրդատվական ծառայություններ իր կորպորատիվ հաճախորդներին՝ վերջիններիս կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության, վերակազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ:

Դիլերային գործունեություն

